

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ “ՆՈՐ ՕՐ”, Ի

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ԲՂՔԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԶՈՐԵՎՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս	
ԳՐԱՆՈՒԹԻՒՆ	ԳՐԱՆՈՒԹԻՒՆ
Գրախոսի համար	Տարեկան, 50
» »	Վեցամսեայ 30
Շրջակայից »	Տարեկան, 60
» »	Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱԶՄԱՆԻ ՇԱՄԱՐ	
Տարեկան	Ձրանգ 18
Վեցամսեայ	» 10

ՌՈՒՍՒՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ	
Տարեկան	Րուբլի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԵԿ Ե ԵՒ ԲՂՔԱԿՅՈՒԹԻՒՆ ՍԱՌԲԸ ԹԻՐԻՔԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻ ՎՐԱՅ Է:

Ձեռագրիչներն եւ չեն դարձուիր:

Արտատու, ժ. ՄԻՒՆԻՑԻ:

ԱՐԵՒԵԼԲ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

(Շարունակ. նախորդ թիւէն)

Արդարեւ քրիստոնէսայ տարրն է որ հակառակ իւր կաշկանդեալ ազատութեան, հանրային օգտակար ծառայութիւններովն փայլուն տեղ մը բռնած է երկրին պատմութեանը մէջ. նամանաւանդ Հայերն, որ իբր բնիկ տարր երկրին, քրիստոնէութեան մեծամասնութիւնը կը կազմեն հոն. ո՞չ ապաքէն թուրքիա կը պարտի իւր վառօդարանն ճատեաններու, իւր ճարտարպետական գեղարուեստի կառուցած շէնքերն Պալեստինայի, իւր օրէնսդատական հաստատութիւններն ու օրէնսդրական բարենորոգումներն Արդարութեան Գործոց նախարարութեան այն երկու անխնայ և հանճարեղ աշխատանքներուն Շահպաղեանի և Վահան Պէյի, իւր Ելեմուական կաղնակերպութիւնն և Սուլթանի անձնական դասնի հարստութիւնը Պէդեաններուն, Յակոբ բաշայի, Փորթուղալեանի և իւրեանց յաջորդ Յովհաննէս Սազրզլեանի: Թուրքիա կրնայ պարծիլ միայն այս նշանաւոր գէմքերովն, որոնք Օսմանեան պետական վարչութեան այլ և այլ ճիւղերուն մէջ՝ չնորհիւ իւրեանց մասնագիտութեան զոր գիտցած են դիրքութեամբ սասանալ Երոզայի համալսարաններու մէջ, չնորհիւ իւրեանց վարչական ընդունակութեան որ յատուկ է իւրեանց ցեղին, արգիւնաւորած են երկիրն և ուղած են դեռ արգիւնաւորել: Բայց աւագ՝ որ մահմետական տարրն, երկիրն իշխող դասն պատուար եղած է Հայոց և Քրիստոնէից այդ յառաջդիմական ձգտումներուն: Հայերն, Մահմետական իշխանութեան ստորագրուած դասն, այդ բազմադարեան գերին, բայց այդ անխնայ աշխատանքներն իբր ուղեցոյց քաղաքակրթութեան, հանրօգուտ ծրագիրներն պատրաստած են. տեղեկագիրներն երկայացուցած են. որոնք հակառակ իւրեանց ընծայելիք մեծամեծ օգուտներուն, անլսելի մնացած են:

Վերջապէս թուրք տարրն չունի այն ոգին ուսանելու, հասկնալու և խորհելու, ինչպէս որ փորձով կը տեսնենք:

Սուլթան Մէճիտի օրովն՝ ուստի կը սկսի թուրքիոյ բարեկարգութեանց և կիրթանէի Օսմանեան օրէնսդրութեան շրջանն, առաջին անգամ ըլլալով Հայերն են որ զրկուեցան յաջորդաբար ի Պրանսա, ոմանք թուրք կառավարութեան և ոմանք անձնական ծախիւք, հոն ուսանելու համար ինչ ինչ մասնագիտութիւններ: Սա ևս ապացոյց մ'է թէ այդ օրէն ի վեր Հայերն արդարեւ պատրաստուած էին քաղաքակրթութեան, և այդ պատճառաւ է որ կառավարութիւնն նախամեծար համարած է զանոնք իբր ընտրելի այդ ուսա-

նողական պաշտօնին, պաշտօն մը զոր վստահութիւն ունեցած չէ յանձնել թուրք մահմետականին: հազիւ վերջերս Երոզայի բժշկական և զինուորական վարժարաններուն մէջ տեսնուեցան մի քանի բացառիկ դէմքեր (բացառութիւնը ինչդիր չէ)՝ որոնք սակայն կարող չեն Հայոց մը նման անթերի աւարտել իւրեանց ուսանողական ընթացքն. ուրեմն ի՞նչ է պատճառը այս և նմանօրինակ թերութեանց. թուրքին ցեղաբանական ծագումը քննելով եթէ ըսենք՝ բարբարոսներու այսինքն թուրքութեան և թաթարներու խառնուրդէն յառաջ եկած ազգ մը ըլլալուն համար է որ չը կրնար քաղաքակրթութիւնը սխալիմք. որովհետեւ դարուս ամենէն քաղաքակրթեալ երկիրն Պրանսա՝ որ գիտութեանց, ուսմանց և արուեստից վառարանն եղած է աշխարհի մէջ, ո՞չ ապաքէն բարբարոսներու քաղաքութիւնն երբ Պրանսան մի սերունդն է, և անտարակոյս է թէ ազգ մը քաղաքակրթութեան առաջ, կամ բարբարոս, վայրենի և կամ տգէտ վիճակի մը մէջ գտնուած ըլլալ կը համարուի մինչև իսկ երկրի մը մայրաքաղաքին և հեռաւոր դիւղին միջև քաղաքակրթութեան տեսակէտով երբեմն զգալի և երբեմն մեծ տարբերութիւն տեսնուած է. զոր օրինակ թուրքիոյ մայրաքաղաքն է Պոլիս՝ իւր Փոքր-Ասիոյ և այլ և այլ գտնուանքներուն բազմապատմութեամբ անհամեմատաբար յառաջադէմ է թէպէտ և բազմապատմութեամբ Երոզայի երկիրներուն՝ անհամեմատաբար յետադէմ է. կեդրոնացում և ապակեդրոնացում, մինչև այն պատճառներէն՝ որոնք կեդրոնի և գաւառներու յառաջդիմական միօրինակ կրթութեան վրայ նուազ ազդեցութիւն չունին:

Իսկ եթէ ըսենք թէ՛ սոյն մթնոլորտն պատճառը երկրին կրթական ազդեցութիւնն է որ ինչպէս ծանօթ է՝ մեծ առնչութիւն ունի երկրի մը բնիկ ժողովրդեան մտաւոր և մարմնաւոր կարողութեանց ծննդեան և զարգացմանը հետ. դարձեալ կը սխալիմք. որովհետեւ այն ատեն պէտք էր միևնոյն թերութիւնն ու անընդունակութիւնը սպասել նաև երկրին բնիկ քրիստոնէայ տարրէն, զոր կը կազմեն մեծաւ մասամբ Հայերն՝ որոնք ընդհակառակն, ինչպէս քիչ մը առաջ պարզեցինք, քաղաքակրթութիւն լոյսէն արագ լուսաւորուած, իւրեանց նախնական բարքերն ու սնտի սովորութիւններն ընդ փոյթ բարեփոխած, դէպ ի յառաջդիմութեան քայլեր առած են: Սոքա ուղեցոյց եղած են դէպ ի յառաջդիմութիւն այն մահմետական դասին՝ որ իբր բարձրագոյն կազմաւորութեան տէր և հարազատ դասի իշխող երկրին, գերի կը նկատէ գիրենք. բայց աւագ՝ մահմետական դասին այդ յառաջդիմութիւնն տկար է ու խաբխուլ. որուն գաղտնեացը թափանցելու համար, քիչ մը ևս յառաջ բարեմք, հոն խաւարին մէջ, ուր կը գիմաւորէ զմեզ կրօնքն՝ մահմետականութեան իշխող

կրօնքն՝ ահա՛ թերութեան և այն մթնոլորտն պատճառը. հեռի կարեւորութիւն ընծայելէ անհաւատացեալի մը քարոզներուն որ Երոզայի քաղաքակրթութեան արձագանքն են. կ'ատէ խաւարին մէջ այդ լոյսն որ քրիստոնէական աշխարհէն կուգայ: Արդարեւ կրօնքի տրամադրութիւններէն ո՞րքան աւելի մոյի է նորա հետեւող ժողովուրդն՝ որոց թէպէտ դասեր կը տրուին Գուրանէն՝ բայց դժբաղդաբար այդ դասերն ուղղութեամբ չեն ուսուցուիր. Գուրանի անհաւատարիմ թարգմանութիւններ են որոնցմով՝ իսլամ վարպետներն կ'ոգևորեն մահմետական մանուկին միտքն մատաղ հասակէն. Գուրանն նոյնութեամբ չ'աւանդուիր ժողովրդեան որ կ'ուսանի զայն նախապաշարեալ գաղափարներով զորս կը հնարեն մահմետական վարպետներն ի վրաս անհաւատացելոց, որ է ի վրաս քաղաքակրթութեան. այդ քարոզիչներն կարհամարհեն ինչ որ քրիստոնէայ է, նոյնն ընել տալով իւրեանց հետեւողներուն:

Գուրանն որ բովանդակութիւն մ'է կրօնքի, իսլամական օրէնսդրութեան, ընկերական, վարչական և քաղաքական գիտութեանց, ուրկէ քաղաքացի են ամուսնութեան, օժիտի, ժառանգութեան, կտակի, ամուսնալուծութեան օրէնքներն, որովորայնուած է Օսմանեան Օրինագիրքն (Մէճէլէ) որ կը լուծէ առեւտրական ամեն խնդիրներ թուրք գաղտարաններու մէջ, ինչպէս որ նաբոլէնի Օրինագիրքն Պրանսայի մէջ, որ ուղեցոյցն և սկզբնակէտն եղած է միջին դարու իսլամ քաղաքակրթութեան, որն որ Ալիբիկէի և Ասիոյ այլևայլ մասերուն տիրելէ վերջը՝ փորձելով տարածուիլ մինչև Երոզայ՝ յաջողած է յատկանալ է՞ որ դարու խալիֆայութեան օրով՝ մինչև Բուսթիյէ ուր Շառլ Մալթէլ յաղթելով իսլամ բանակներուն, փրկեց քրիստոնէական քաղաքակրթութիւնն իսլամ քաղաքակրթութեան ճիւղաներէն, սրոյ աղբիւրն եղած էր միայն Գուրանը, որուն վրայ ձեռուած էր նա:

(Շարունակելի)

ԳԱՅԻՐԵԻ ԳԱՍՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԵԱՆԻ ԳԱՐՃԱՐԱՆԻՆ

(Շար. նախորդ թիւէն)

Կա՛յ սակայն հինգերորդ պատասխանատու մ'ալ. աշակերտաց ծնողքը, որոնք, փոխանակ տները, փողոցները, հրապարակները, սրճարաններն ու զբօսարանները բանալու վարժարանին խօսքը, փոխանակ հօս ու հօն, այս ու այն պաշտօնեան, ուսուցիչը կամ հօգաբարձուն բամբասելու, փոխանակ յաւիտենական յանկերգով մը,

առաջին հանդիպոցին, Գալստեան վարժարանին եղբերեզր հեծեծելու, երբեմն ալ պառաւական անէծքներ տեղալու օգին մէջ, անոնց վրայ, որոնք իրենց զաւակներուն գաստարակութեան հոգն ու պաշտօնն ստանձնած են. վերջապէս, փոխանակ ամուլ ու խեղճ միջոցներով վարժարանը վարկաբեկ ընել փորձելու, լուազոյն գործ մ'ըրած կ'ըլլային, ի թէ ամենքը մէկ բերան, հաւաքական բողոք մը տային ժամանակին Ազգ. վարչութեան ձեռնհաս մարմնոյն, այն է Պատկ. Գաղ. Ժողովին, որ իր կարգին, երբ ըստ իր բարի սովորութեան, նկատի չ'առնէր անոնց դիմումը, զանազան պատրուակներով ու ողորմելի փաստաբանութեամբ մը ջանալով տարհանուելու բողոքարկուները, այն ատեն, այդ ծնողքները, աշակերտաց գաստարակութեան հարցին միջամուխ ըլլալու միակ իրաւասութեան տէրերը, կրնային առանց մեղադրուելու, միահամուռ քաշել հանել վարժարանին իրենց զաւակները և թողուլ որ ուսուցչինը գաստարակութեան թափուր գրասեղաններուն, սե գրատարակներուն հետ գէժ առ գէժ կ'եղած: Եղան ծնողներ ալ որոնք առանց իրազեկ ըլլալու անցած գարձածներուն, լոկ լսելով ասկէ անկէ, իստուեցան զանազան տողներուն գաստին ու եղան չար ընդունել, որ ժողովրդին մէջ տարածայնեցին անհիմն ու այլանդակ սուտեր, պատրուելով մտքերն ու գայթակղեցնելով:

Սակայն պէտք է խոստովանիլ թէ՛ այն ծնողները, զորս պատասխանատու կը ճանչնանք, ունին մեղմացուցիչ պարագաներ իրենց գատապարտութեան. զիստոր պարագան այն է թէ՛ Գալստեան վարժարանին դէմ յարուցուած հրապարակային պայքարը, լրջօրէն չը տարուեցաւ առաջ, այլ ստայոգ զրպարտութիւններով, ու հայհոյանքներով փողոցի կռիւ գարձաւ. ու ամեն գիտակից ու հեռատես ընթերցող զիւրաւ մեկնեց այդ պայքարին ներքին շարժառիթն ու նպատակը. յաճախ տրտունջներ կը բխէին այն բերաններէն, որոնք ա'լ չէին բացուիր եկեղեցիին կամ վարժարանին մէջ. վարժարանին վարչութեան հակառակ գրողներն այն ձեռքերն էին, որոնց ա'լ արգիլուած էր կատարել հօն, Գալստեան վարժարանին մէջ, իրենց գրելու պաշտօնը. հետեւաբար այդ բոլոր տրտունջներու ու հակակրօթիւններու պայքարը բնաւ հետեւանք մը չէ ունեցած և բնական է թէ՛ չուննար, քանի որ կողմակալութեան ոգևուլ մղուած էր. ու այս եղաւ պատճառը ծնողներու անտարբերութեան:

Բայց թողունք հրապարակը, մտնենք ընտանեկան յարկէն ներս. ծնողները պէտք չէ՞ր որ հետաքրքրուէին իրենց զաւակներուն ուսմունքովը. պէտք չէ՞ր որ իրենց զաւակներէն, այդ միակ անկեղծ ու հաւատարիմ լրաբերներէն քաղէին լիութիւն և ստոյգ տեղեկութիւններ անոնց յաճախած վարժարանին ներքին գրութեանը մասին: Եւ որովհետեւ այս պարզ ու գիւրին պարտականութիւնն ալ չ'ըրին, գատապարտելի են միշտ ու պարտաւելի իրենց անհոգութեան ու անտարբերութեան համար:

Պատասխանատուները թուելէ յետոյ անցնինք աղետաբեր Յայտագրին, որ կէտ առ կէտ գործադրուած է վերջին գծազդ չըջանէն ի վեր, վարժարանին գրեթէ վատարուելով հայեթհէն ու Ազգ. գաստարակութիւնը նպատակաւոր ուսմանց առարկաները. աշակերտներուն վարքն ու վարժարանին կարգապահութիւնը բնաւ նկատի չ'առնուելով, հակողութիւնը յանձնուելով ծանծաղամիտ ազդ. մը, ամիսներով բացակայող, կէս օրերէն վերջը միայն գտնուելով գլուխն իրեն յանձնուած պաշտօնին, որուն բողոքովն օ-

տար է, բացակայութիւնը մնայուն կարծեցեալ հսկողին, աչքէն կը վրիպի Տնօրէնին, որուն խորասոյզ նայուածները մեծ Բողոքին սահմանները կ'ընդգրկեն:

Տնօրէնը, Տիար Յովհաննէս Սեթեան, մին է հայ մտքերէն, որոնք ցեղին պարծանքն աւելցնելու համար կուզան երբեմն երեւան. բանաստեղծ մը, բառին բովանդակ իմաստովը կը յարգենք զինքն ու կը սիրենք կարգալ իր գեղեցիկ քերթուածները, արձակ թէ ոտանաւոր: Սակայն, իր ա'յնքան գնահատելի ազնիւ ձիրքերն ու փայլուն տաղանդը չ'են բաւեր ու չ'են կարող ապատելու զանի պատասխանատուութեան ծանր բեռնէն, քանի որ ան՝ բանաստեղծ ծնած է և չէ՛ օժտուած վարժարան մը կառավարելու համար պահանջուած յատկութիւններով քաջ լեզուադէտ մ'է ան, սակայն իր լեզուագիտութիւնը մատաղ սերնդին փոխանցելու, սովորեցնելու համար պէտք ունի հետեւելու նախապէս գծուած յայտագրի մը, ուսուցման մեթոտի մը. ուրեմն մեր յարգելի բարեկամն ու պաշտօնակիցն իր ուսերուն վրայ դրուած Տնօրինութեան այդ ծանր բեռը չ'կրնար տանիլ. բեռ մը, որ անհամեմատ ծանր է բազմատմամբ զայն կրողին կարողութեանը. Տնօրէն մը՝ ո'չ միայն պարտի վարել աշակերտները, գաստարակութիւնները, կարգապահութիւնը, ուսանողներուն բարոյականն ու մտաւորականը, այլ և, պէտք է որ Արգասի աչքերով դիտէ, քննէ, հասկընայ գաղտնի մեքենայութիւնները, որ հազուագէտ չ'են մեր ուսուցչներու միջև, որոնք իրարու դէմ դաւաճելով ու լարելով իրենց պաշտօնի տեւականութիւնն ապահովելու տխուր դաւանանքին կողմնակից են: Տնօրէն մը պէտք է որ աշակերտներէն և ուսուցչներէն յետոյ, զիտնայ վարուիլ հոգաբարձութեան հետ, երբէք ինքզինք չ'ստորնացնել անիրաւ ու անարամբան հրահանգներու առջև. պէտք է պահէ իր ետն ու իր վարկը. միշտ բարձր, երբէք նուաստ, պէտք չէ գիմէ Հոգաբարձութեան մանր մուկը դպրոցական գէպերու համար, զորս ի'նք անձամբ կրնայ կարգադրել. իր ներկայութիւնը՝ պատկառանք պէտք է որ ներշնչէ վարժարանի ժողովրդին, թէ՛ աշակերտաց և թէ՛ ուսուցչներուն. պատկառանք մը, որ իր բացակայութեանը միջոցին անգամ շարունակէ աղղել:

(Շարունակելի)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ԼՈՒՏՐԱՆ 2 Օգ. — Սըր է. Սէյմուր ծովակալը նանքին գնաց փոխարքային այցելութեան:

Թիէն-Ձինէ կը հաղորդուի թէ ճարտական յառաջապահ գունդը 150 մարդ կորուստով ետ մղուած է: Կ'ըսուի թէ Ռուսերը քանի մը բերդեր գրաւած են Թիէն-Ձինէ 10 մղոն հեռու, որուն պահակազօրքը, թուով 10000, փախած է: Տեղատարափ անձրեւներն սկսան և Զինացիք կը պատրաստուին ազատելու երկիրը:

Բէքինի Թայպիթ թղթակիցը կը հեռագրէ Յուլիս 21 ին թէ՛ Ռուստա բերուած է պաշարեալներուն: Բողոք գետաբաններն ու իրենց ընտանիքները քաջառողջ են և հանգիստ, կ'սպասեն ուրախութեամբ իրենց ազատութիւնը:

Հիւանդանոցի հոգատարութիւնը կը կատարուի գարմանալի կերպով:

ՀՈՒՄ 2 Օգ. — Հեռագրուէ բացայայտ կ'ըլլայ թէ Ռուսներէն սպանուած զաւաղրութեան մ'արգիւնք է: Շատ անիշխանականներ ձերբակալուեցան:

ԼՈՒՏՐԱՆ 2 Օգ. — Պ. Պարթիւր յայտարարեց թէ Մեծն Բրիտանիա ազգուպէս բողոքած է Սիբիրոյի անպարտապահութեան և ազատ արձակման դէմ: Պէլճիքա չէ՛ պատասխաներ:

ԲԱՐՍ 2 Օգ. — Գործաւոր մը ցատկեց Շահի կառքին պատուանդանին վրայ չըջանար մը շողացնելով: Մեծ-Վէզիրը զինքը վրիպուց և մարդը ձերբակալուեցաւ:

Մարդ մը Պարսից Շահին սպանացաւ կառքով Յուսանդէսին պալատէն գուրս կ'ընելու պահուն: Շրջահարը լիցուն էր. անմիջապէս ձերբակալուեցաւ մարդը, բայց բառ մը չը հաներ բերնէն:

ԼՈՒՏՐԱՆ 2 Օգ. — Պ. Պարթիւր Խորհրդարանի մէջ ծանոյց թէ՛ կառավարութեան քաղաքականութիւնն ի Ձին կը կայանայ միւս տէրութեանց հետ գործակցելու մէջ, զեւպանութեանց շուտափոյթ ազատութիւնը, զեւպաններուն նուիրական հանգամանքին վրիժառութիւնը սուգանք մը ձեռք բերելու համար, բայց պիտի ընդդիմադրէ Ձինաստանի բաժանման: Այս երկիրը պէտք է որ կառավարուի Ձինացիներուն օգտին ու անոնց ձեռքով: Պ. Պարթիւր յոյս յայտնած է թէ՛ չինական տագնապը պիտի դաս մ'ըլլայ ապագային համար: Խոնձուութիւնն ու համբերութիւնն անհրաժեշտ են այսպիսի կայսրութեան մը բարգաւաճման: Մեծն Բրիտանիա երբէք չը պիտի համաձայն գտնուի Ձինաստանի տուժելուն:

Որոշած է պաշտպանել ամեն զոհողութեամբ Շահի-Հայը, եւ իր բողոք ոյժերը տրամադրել, Եանկ Ձէյի փոխարքայներուն հետ մրցելու և այս գետնափոխ մէջ կարգը պահպանելու համար:

Թայպիթ Բէքինէ կ'իմանայ թէ՛ վրիժառեալները քաւական աղէկ են: Ձինական մեծաքանակ ոյժերը կը դիմաւորեն օգնութեան գացող զորազինները: Ձինացիները կ'երեւի թէ առանց զոյգն վարանման կրակի տուած են Հանլինի հռչակաւոր Համալսարանը և անոր յոյժ թանկազին մատենադարանը, իրենց յարձակումը դիւրացնելու նպատակով:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՐՏ ԳՐՈՄԵՐ ՎԵՆ. Թագուհին պիտի ներկայանայ այս շաբաթ Օսպորնի պալատը: Այդ այցելութիւնէն յետոյ նորին Տէրութիւնը պիտի երթայ Սկոտլանդ, Սորէթէնօր լոճ, հօն իր սովորական օրսորդութիւններն ընելու, Պ. Թոմաս Պէրիսի կ'ետ:

ԼՈՐՏ ԳՐՈՄԵՐ, վերջերս ՎԵՆ. Թագուհին ունկնդրութեան ներկայացաւ Օսպորնի պալատին մէջ: Նորին Տէրութիւնը տակաւին 10 օր ալ պիտի մնայ Լոնտոն, Սկոտլանդ երթալէ առաջ: Թագուհին ներկայացուցիչը պիտի վերադառնայ յառաջիկայ ամսուն ի Լոնտոն, ուր քանի մ'օր մնալէ յետոյ, եղիպոսս պիտի վերադառնայ հոկտ. 4ին:

ՎԻԳՅՕՐ ԷՄՄԱՆՈՒԷԼ հաստատեց Սարագոյի պաշտօնէութիւնը: Հոտի մէջ, գաղիճը պատրաստեց նոր Թագաւորին հրատարակումը ժողովրդին և զայն յանձնեց Վեհապետին հաւանութեանը:

Սորբրդարանը պիտի գումարուի երկուշաբթի օգոստոս 6ին:

Մեծ պատրաստութիւններ կ'ըլլան Հոտի մէջ Թագաւորին ժամանման համար:

Ռուսներէն Ս. ի մարմինը պիտի թաղուի Բանթէօն Վիգթօր Էմմանուէլ Ա. ի քով: Եւրոպայի բոլոր արքունիքները ներկայ պիտի գտնուին յուղարկուելու թեանց: Ճրանաւ պատգամաւորութիւն մը պիտի զրկէ զօրպետի մը նախազանութեամբ: Գերմանիոյ կայսեր ու Գահաժառանգին գալուն կ'սպասուի:

Դիւանութիւնը հաստատեց թէ՛ չըջանարի ստալին հարուածը հանդիպած է սրտին, երկրորդը ձախ իսկ երբեք ալ կողմի կողերուն:

Այս հինգշաբթի օրուան նիստին մէջ, Իտալական գաղթականութիւնը որոշեց կազմակերպել յուղարկուելու թեանց օրուան համար թափօր մը Գահիքի մէջ, որ պիտի մեկնի Ապոլինի հրապարակէն, երթալու համար Իտալական զեւպանատունը: Առջեւէն պիտի երթայ Պօթէսպիի երաժշտասէր Բնկ. նուագախումբը, հաւանորէն բրիտանական զինուորական նուագախումբեան ընկերակցութեամբ:

ՁԱՐԻՆ ՔՈՎ. — Պաշտօնական շրջանակներու մէջ տարածայնութիւն կայ թէ՛ Նիքոլա Բ. Չարը իր Բէթթիօնի պալատը կանչել տուած է Բէթթիպոլիի Ձինական զեւպանը. ոտքի վրայ կեցուցած՝ ստիպողաբար հարցուցեր է անոր որ անմիջապէս բացատրութիւններ տայ իրեն, Ձինացիներուն Ռուսական սահմանազուխը յարձակելուն նկատմամբ:

Դիւանը կը վարանէր, բայց որովհետեւ Չարը կը ստիպէր զինք որ սեղն ի տեղը պատմէ ճշմարտութիւնը, խոստովանեցաւ ի վերջոյ թէ՛ նոյն իսկ Բէքինի օրինաւոր կառավարութիւնը հրամայած էր Ձինական զորազիններուն յառաջխաղացումը. պատու իրելով սակայն որ խնայուի Ռուս զօրքերուն կեանքը, շարժման նպատակն ըլլալով՝ Մանչեսթրիան պահպանել Ռուսական զօրքերուն արշաւանքէն:

Չարը սառն լուսութիւն մը պահեց այս պատասխանին առջև: Դիւանը պալատէն գուրս կ'ըլլաւ, առանց սովորական արարողութեան. պահակները՝ զինքերը չը մատուցին իրեն:

Ձրոյց կը պտտուի թէ՛ Իանկ Իու Բէթրսպուրկի մէջ պատանդ կը պահուի :

—Կ'իմանանք թէ՛ Սասունի Հայերը տեղական իշխանութեանց վտրուութենէն զրգուած՝ շարժում կը պատրաստեն : Բայց շատ անպատեհ է վայրկեանը, քանի որ տէրութիւնները թաղուած են չինական զործնուն մէջ :

ՍԵՐՊԻՈՅ ԹԱԳԱՒՈՐ Աղէքսանդրի պաշտօնական նշանախօսութիւնը Տիկին Տրակա Մասքէնի հետ, պաշտօնապէս կատարուեցաւ յուլիս 28 ին, արքայական նշանաձիւն տուելով, ի ներկայութեան Պէլկրատի Մէթ-րարօի Իննովիէն Սրբազանի, նախարարներուն, արքունի թիկնապաշտներուն ու Տիկին Մասքէնի ազգականներուն : Յունագաւան եկեղեցւոյ սովորութեան համաձայն բոլոր արարողութիւնները կատարուեցան : Մէթրարօյի սուաւ. Եկեղեցւոյ գրաւոր հաւանութիւնը թագաւորին սոյն տարօրինակ ամուսնութեան : Պատկի խորհուրդը կատարուեցաւ Յուլիս 29ին կիրակի օրը թագաւորական Գոնազին մէջ :

Նշանախօսութեան հանգէտէն առաջ, Ռուսական զեականատան զործակատարը Պ. Մանուրօֆ, երկար ատենէ ի վեր առաջին անգամ ըլլալով ներկայացաւ պալատը, Նիկիոյ Բ. Ջարին հրամանաւ, թագաւորին հաղորդելու համար Ջարին խնդակցութեան հետազոտող, թագաւորին ամուսնութեան առթիւ : Պ. Մանուրօֆ գնաց նաեւ այցելութիւն տալ ապագայ թագուհոյն :

Ջարին խնդակցութեան հետազոտող վերադրելի է Աղէքսանդրի թագաւոր զթուրթեան զգացմանը, որով մասնաւոր ներում չնորհեց քաղաքական դատաւարաններուն, որոնք խանգաւառ ինքութեամբ ողջունեցին արքայական ներուժը : Շատ մը ռուսասէր բարձրաստիճան սպաներ ու բժիշկներ, որ արտասանման կ'ապրէին, աղաբարութիւն ստացած են թէ կրնան վերադառնալ Սերպիա :

Իսկ Միւսն, նախկին թագաւորը, կ'երեւի թէ միտք ունի ամուսն անցընելու Վիէնայի շրջակայքը կամ իր Հունգարիոյ մաճառ բարեկամներուն քով :

Գալով Նաթալի թագուհոյն, սա չ'պիտի հաւանութիւն տար իր որդւոյն ամուսնութեանը, իր վաղեմի պատուոյ տիկնոջ հետ, եթէ այդ ամուսնութեան հետեւանքով նախկին արքայ Միւսնի հետազոտող նկատի չ'առնէր. եւ սակայն, ինք պահ մ'իսկ չ'խորհեցաւ երթալ Պէլկրատ իր որդւոյն ամուսնութեան համար :

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԸ ամսոյս 8 ին չորեքշաբթի օրը Լուվր պիտի հասնի Անգլիա այցելելու համար : Նորին Վեհափառութիւնը ամսոյս 10 ին պիտի ներկայանայ Վեհ. Թագուհոյն Օսպրենի մէջ, ուսկից նաեւ պիտի մտնէ 21 ին զէպ ի ցամաք :

ՍՈՒԼԹԱՆԸ, Սերպիոյ զեական Պ. Միլադովիչի յանձնարարեց խնդակցել Աղէքսանդր թագաւորին, Տիկին Տրակա Մասքէնի հետ նշանախօսութեանն առթիւ :

ՎԵՊՈՐ ԷՄՄԱՆՈՒԷԼ անցեալ չորեքշաբթի իրիկուն հասաւ Մօնթա :

ՌԻՊՊԵՐԹՈ Թագաւորին պղծէ թագ մը զրկելու համար, ըստ առաջարկութեան Իմբարձիալի Լրագրին, տեղւոյս իտալական հիւպատոս Պ. Թօքսանիի նախագահութեան ասկ Մասնախօսմը մը կազմուեցաւ հանգանակութիւն մը բանալու եւ ողբացեալ Վեհապետին յուղարկուորութեան օրը Հոգեհանգիստ մը կատարել տալու պաշտօնով :

ՍՈՒԼԹԱՆԸ Իրասկ մը տուաւ ծովային նախարարութեան պայմանագրութիւն մը կնքելու : Բրուսի տան հետ, ժընէվի մէջ նորոգուող 10 զրահաւորներուն թնդանօթներ հայթայթելու համար : Այդ մասին անդլիական աւելի շահաւէտ առաջարկներ եղած, բայց մերժուած են :

ԻՎՏԱՄ, Երլարդի պաշտօնական թերթը կ'ըսէ թէ միւսլիմանները գոնուսակութեամբ իմացած են Բէթրիի օտար զեականներուն ողջութիւնը : Նոյն թերթը կ'աւելցնէ նաեւ թէ՛ Սուլթանը շատ ցաւ զգալով քաղաքակրթութեան եւ մարդկութեան հակառակ զործնած վայրագութիւններէն, կը խորհի եղեր թրքական զօրակներ զրկել հոն, պրծակցելու միւս Տէրութեանց զօրագնդերուն, այգպիսի խժժութիւններ զսպելու համար . . . Աղուտը կատակերգութիւն, աւելի նողկալի ու քստմեղեցուցիչ բարբարոսութիւններ գործող իր այդ զօրագնդերը պիտի զրկուին հիմայ քաղաքակրթութեան եւ մարդկութեան դատը պաշտպանելու . . .

ԺԱՆՏԱՆՏԸ. — Աղէքսանդրիոյ Կապուարիի գիւղացի զործաւոր մը բռնուած է ժանտախտէն, որով դարձանուողներու թիւը բարձրացած է 4ի ժանտախտի տեսիլի միջոցովն ոտքերը կտրեցան ձիտուէլի, Իսմիրի ու Բօր-Սայրուի մէջ, բայց Պէրուսի մէջ մահապիւռ արշաւանքը կը կատարէ, օրը 4 հոգի սանելով . . . մեծ բան : Աղէքսանդրիոյ մէջ ժանտախտ ալ չկայ

զրեթէ : Իսկ Թուրքիա, որ ջնջած է ձիտուէի եւ Իզմիրի բարձրագոյնները, եւ կէսի վերածած է Բօր-Սայրուին ու Երկարոսի ուրիշ ծովեզերքներէն զազոյններուն վրայ զրուած մաքրանոցի պայմանաժամը, Աղէքսանդրիոյ համար դարձեալ 10 օրը կը պահէ, քանի որ այս գլխաւոր նաւահանգիստը դեռ կը տառապի :

Հաւաստի աղբիւրներէ քաղուած տեղեկութիւնները միտքարական են Կ'ըսուի թէ՛ օրական վիճակացոյցը պիտի ջնջուի, եթէ մինչեւ օգոստոս 9 նոր զէպը չ'պատահի : Հակիրճ, ըստ ամեն երեւոյթներու, ժանտախտը բոլորովին պիտի անհետանայ Երկարոսէն մինչեւ յառաջիկայ . . . Մայիս :

Աղէքսանդրիոյ մաքրանոցի վարչական խորհուրդը, երկու օրէ ի վեր, որոշեց ջնջել Պէրուսի զէմ գրուած 10 օրուան քառանօրեակը :

Երկարոսի մէջ Ապրիլ 27 էն մինչեւ օգոստոս եւ, ժանտախտէ բռնուած են 106 հոգի, որոց 45ը մեռած ու 58ը բժշկուած են, կը մնան միայն 3 հոգիներ գարմանուելու :

Վերջին շաբթուան մէջ, այսինքն մինչեւ Յուլիս 31, 3 հոգիներ միայն նշանակուեցան ժանտախտէ բռնուած Աղէքսանդրիոյ մէջ, Երկարոսի մնացեալ մասերուն մէջ ոչ ոք բռնուած է. իսկ բռնուողներէն ալ ոչ ոք մեռած :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ընկերութեան Գործ. ժողովը նուիրական պարտք կը համարի հրապարակաւ իր խորին շնորհակալիքը յայտնել Օմոտերմանաբնակ յարգոյ Ազգայնոց, որոնք ուղելով սատարել այսպիսի յոյժ մարդասիրական գործի մը, բարեհաճած են իրենց մէջ հանդիսակութիւն մ'ընելով վեց (6) Եգիպտ. ոսկւոյ դումար մը զրկել մեզ Աղէք. Առաջնորդարանի միջոցաւ :

Կը յուսանք որ յիշեալ բարեսէր հայրենակիցներու սոյն տոնմատերական ձեռնարկն ուրիշ հետաքնակ ազգակիցներու ալ բարենախանձ օրինակ մը կրնայ ըլլալ :

Ի դիմաց Գործ. ժողովոյ Որբասիրաց Ընկերութեան :

Գանձապետ Վ. Առեւադպրի Փոխ-Առեւապետ Կ. ԵՐԶԵԿԱՅԵԱՆ Կ. ՎԱՐԴԱՆԵԱՆ Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՔՈՒՆ ԹԵ ԱՐԹՈՒՆ

Քուներ մարմնոյն ու մտքին սնուցիլն է.

Քուներ, ըստ բժշկական վկայութեանց, արեան տակաւ առ տակաւ ուղեղը խուժելէն առաջ եկած թմրութիւնն կը նկատուի, նախ տեսողութիւնն կը կորսնցնէ իւր զօրութիւնը, յետոյ լսողութիւնը եւ իրենց կարգին բոլոր զգայարանները, հուսկ յետոյ կամքը, ու ամեն վերջ երեւակայութիւնը կամ ուղեղը. մինչդեռ սիրան կ'աշխատի անազար ու երբ ան եւս դադրի գործելէն՝ ալ այդ թմրութիւնը յաւիտենական կը դառնայ. մարդկային կազմուածքին մէջ, ինչպէս կ'երեւի, ամեն աւելի տոկոսները սիրան ու ուղեղն են :

Չայն անժխտելի կերպիւ կը հաստատեն այն բնական երազները, որք շատ անգամ կը պատահին միտքէ ինքնոյ մասին չափազանցօրէն մտատանջուող անձանց, յաճախ իրենց երազներուն մէջ՝ վայելելով իրենանց բազմանցը պակուտը, եւ կամ զրկուելով մինչ ցայն վայր տաժած յոյսերուն . . . երազներ որք շատ անգամ, զուգահէտ պարս կամ բնութեան գաղտնի միտքէ տնօրինութեամբ. ճշգրիտ կերպով կ'իրականան մտաւրում եւ կամ հեռաւոր ժամանակամիջոցէ մը վերջ : Աստ երկար կը ընի, եթէ ուղեղը մի առ մի յիշել սոյն ճշմարտութիւնն հաստատող մի քանի նշանաւոր զէպեր, որք մինչեւ ցարդ կատարուած են երկրագնդի վրայ . . . Որքան որ սա բնութեան մի գաղտնիքը ներկատուած է մեզ — թերեւս ինձ համար, բայց եւ այն պէս յետագայ կերպիւ կարող ենք գէթ մտաւոր գազափոր մը կազմել այդ երեւոյթին լուծման մասին :

Մտքի շուժուած քաղուկներէն յայթախարարողի մը մարմինը, թէեւ հոգնած այդ անհաւասար մաքառուէն, թմրած ու անզգաւ կը հանգչի, բայց եւ այնպէս ուղեղը տակալին կորուսած չ'լինելով զօրութիւնը, անխնայ ու աննկուն կը գործէ . . . նամանաւնց օգուտ քաղելով միւս զգայարանաց գործադուլէն, կ'ամփոփուի միմիայն մէկ կէտի վրայ. թոյններ կ'առնու, անհունին մէջ կը միւրճի, կը խորատուղի, կը հեռատեսէ եւ վերջապէս երեւակայութիւնն ու սրատեսութիւնն ա'յն աստիճան կը զօրանան որ, յաճախ հոյաքներ իսկ կը գործեն . . . բայց այս տեսակ քացառիկ տեսիլներ առողջ մտքերու սահմանուած են :

Արդ, այժմ ի նկատի առնելով մեր՝ Հայ հանրութեան արդի գրութիւնը, բազմատեսք եւ տեսնեք թէ ինչ զգալի տարբերութիւն ունինա քնացող անհասէ մը

—Ոչինչ . . . Անշուշտ յարգելով բացառութիւնները, — որք զբարազար շատ աննշան թիւ մը կը կազմեն — կարող ենք ըսել թէ՛ ՀԱՆՐԱՅԻՒՆԻՆԸ ԲԱՑ ԱԶԳԵՐՈՎ ԳՆԱՇՐՁԻՒՄԷ . . .

Որովհետեւ իւր աչիքը տակալին չ'են կարող տեսնել ներկայի պահանջները, դանազանել բարին ու չարը, անձնուէրն ու խաչազողը . . .

Ականջները անընդունակ են լսելու ճշմարտութիւնը, եւ կամ ինչ որ իւրեանց մտաւորականն ու բարոյականը բարձրացնելու կը ծառայէ. սկանջնե'ր, որք խուլ կը մնան հաղաբար անտէր ու մերկ որբուկներու աղեկտուր աղաղակներուն հանդէպ, ու կը սիրեն լսել միմիայն ինչ որ մտածին է, չարամտութեամբ խեղաթիւրուած ու զրպարտութեան լիտի գրոշմը կը կրէ . . .

Ունի բերաններ, որք երազողի մ'անկապ ու անիմաստ դատանցանքներուն նման, սին յոյսեր, բարձրութիւն ջատագովութիւններ, փրճուոց անձնագովութիւններ, կանխակալ կարծիքներ, զրպարտութիւններ ու լուսանքներ միայն՝ արձակելու կը գործածուին :

Ձեռներ, որք սահմանուած են միմեանց փառաց զափնիններ յափշտակելու, զիրար քանդելու, եւ մինչեւ իսկ միմեանց արտերն կեղեքելու անարգ պաշտօնին (?) ճիշդ այնպէս՝ որպէս ննջող մարդ մ'անգիտակցաբար եղունդի ճանկրտուքներ կը թողու իւրքթիւն կամ այտերուն վրայ . . .

Ա'րդ, ինչո՞վ կը տարբերին այդպիսիք Մտքիտոսի գերիններէն, զի նոքա եւս յաճախ կը խօսին, կը շարժին, կը բողբեն . . . որուն մնաք պարզ յատով կ'ըսենք երազել կամ զառանցել :

Կը մնայ ուղեղը. ահա՛ բուն վկան :

Ուղեղը, որպէս ըսինք, ընդհանուր զգայարանաց հրամանատարն, որպէս նաեւ քնոյ չ'աստուածոյն երկաթէ կամքին զէմ ամենէ կատաղի մաքառողն է, մեր հանրութեան մէջ ամենէ առաջ յաղթարարուողն ինքն է եղած. այո՛ մեր ուղեղը, երեւակայութիւնը, զգայութիւնը եւ վերջապէս մտածելու ու դատելու կարողութիւնը իսպառ թմրած ու խոր քնոյ մէջ են թաղուած. թմրութիւն մը, որ մեր նախահարց ժամանակէն սկսեալ մինչ ցայժմ ծանրացած է մեր էութեանը վրայ :

Ամեն չափազանցութիւն վտանգաւոր է. ինչպէս նաեւ երկար քուն մը, որ փոխանակ կազդուրում յառաջ բերելու՝ աւելի կը տկարացնէ ու կ'պատէ կնիսկային ոյժը, մանաւանդ ուղեղը :

Միթէ ազգի մը, ժողովրդի մը համար չափազանց չէ՞ հնգադարեան դատապարտելի քուն մը . . . քուն, որ հետի չէ յաւիտենական դառնալէ :

Ժամ է հիմայ զարթնելու, թօթափելու նախկին կորստարեք թմրերը որպէս զի մեր ամբողջ էութիւնը անձանձիր վերսկի իւր պաշտօնը՝ ուղղաժիտ ու գիտաւկից :

Թո՛ղ այսուհետեւ մեր աչքերը վարժին տեսնել իրերն իրենց բնական կացութեանը մէջ. զանազանել զիմակաւորն՝ անկեղծէն . . .

Մեր բերաններն սովորին այսուհետեւ իրենց մէջ զեանդուած լեզուն գործածել միմիայն պաշտպանելու, երեւան հանելու համար ճշմարտութիւնը, համոզելու եւ ուղղութեան շաւղին մէջ գնելու այլոց սխալ կամ թեր ու զէմ թուիքները :

Մեր ձեռքերը՝ եղբայրաբար պարտինք միմեանց նեցուկ շնորհել. մեր ձեռքերով, ուխտովք բաշխել (ամեն ոք իւր կարեացը համեմատ) մեր սրտաբուխ նուէրները կարօտելոց, որբուկներու եւ հանրային օգտակար հաստատութեանց : Ինչ որ արդէն ամենուս ալ ընկերական սրբազան պարտականութիւնն է :

Վերջապէս մեր ուղեղները՝ թօթափելով նախկին խաւարամտութիւնը, սովորին դատել, տրամաբանել, ըմբռնել անցեալի գործնական դասերը, հետի վանել անձնական գժուձ կրքերը, ետեւեան քայքայել ու պառակտել ունեակութիւնը, եւ իբր հանրային ու գործնական մարդ՝ նետուի'նք այն ճակատագրային մեծ կռուին մէջ, որ կեանք կ'անուսնուի :

Ազգի մը յատաճաղիմութիւնն ու երջանկութիւնը կը կայանան համերաշխութեան եւ ուղղամտութեան մէջ. ահա երկու կենսական պահանջներ՝ որոնց պակասը մեր նախահարց ժամանակէն սկսեալ՝ զգալի կերպով չեղանուած է ու կը շեղուի տակալին . . .

Գիտուններն ըսած են թէ՛ ճշմարիտ երջանկութիւնը իւր վիճակէն գոհ ըլլալն է :

Մէթէ զգայուն սիրտ մը, իւր իրաւասութիւններն ու պարտականութիւնները գիտակցօրէն ըմբռնող անհաստ մը, կարող է ինքզինք գոհ ու երջանիկ նկատել, ինկատի ունենալով իւր համարին եղբայր, հանրութեան ներկայ արգահասակի գրութիւնը . . . ո՞վ է որ կը յանգչի ըսելու թէ «Ես անձնականապէս երջանիկ եմ, մնացեալն ինչ փոյթ» . . .

Հանրային կեանքին մէջ Մտրդ ինչ որ կարող է կը պարտի . . . երբէք ներքի չէ գասակարգի մը անձնականովը պարտապիլ, զի արդարութիւնը վաղ կամ անա-

զան իւր անողոք վճիռը պիտի գրոշմէ այն ամէն անձ- նասէր ու անտարբեր անհատներուն ճակտին, որք կը թերանան իրենց սրբազան պարտականութեանցը մէջ...

Բաւ է այսքան երկար քուն մը, զարթնո՛ւնք... ՎՐՈՅՐ

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպաստ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ «Բազմավէպ» բա- ցաթիկ պրակ մը կը հրատարակէ Թերթին երկայնու- թիւնն է 42 հարկ ընդամենը, լայնք 30 հարկ է Թեր- թը կը բաղկանայ 40 էջերէ, եւ ամէն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր է կը պարունակէ ժողովրդեան ուշադրաւ հետաքրքրական եւ օգտակար յօդուածներ ։

«Բազմավէպ»ի այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իրերեւանյանիկ «Հայ պատ- կերազարդ թերթ» մը Illustration Arménienne, նման Եւրոպական մեծ ազգայն շաբաթական պատկերազարդ թերթերուն ։

Կը տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի յատ- կացուի հայ որբանոցներու ։

Գինն է ԿԱՆՆԻԿ 2,50 ֆր. կամ 1 րբ. 50 սէնթ ։

Այս ծանուցազրով կը հրաւիրենք մերազնեայ այն ամէն ազնիւ ու զթած անձնաւորութիւնները որ բա- ժանորդագրուելով այս բացառիկ պրակին, համետ լու- մայ մը բարեհաճին ձգելու հայ որբիկներու գանձանա- կին մէջ ։

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նպատա- կաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին «Բազմավէպ»ի պրակին- թուն մէջ ։

Այս բացառիկ թերթին մէջ կը տպուին նաեւ ծա- նուցումներ, մէկ տողի գինն է 25 սանդիմ, փափագողք փութան յղել իրենց ծանուցումները ։

Մեր հասցէն է՝

Rédaction de la Revue « PAZMAVEB » (St. Lazar) VENISE (ITALIE)

Որբերու հոգատար եւ Վասպուրականի Որբանոցի ընկերութեանց Միացեալ Գործ. Ժողովներու կողմէն վարչութեան ղրկուած է հետեւեալն ի հրատարակու- թիւն ։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Վասպուրականի Որբանոցի եւ Արարկիրու Որբե- րու Հոգատար ընկերութեանց հանրային ձեռնարկներու մէջ միացեալ Գործադիր Ժողովներն՝ պատիւ ունին ծա- նուցանելու պատ. Հասարակութեան թէ տեղւոյս ազ- գային Աւսնորդարանի արտօնութեամբ ի նպաստ ի- րենց եւ Պոլսոյ ազգ. Պատրիարքարանի Որբերու Մտու- կին կազմակերպուած վիճակահանութեան 3000 տու- սերն ամբողջովին սպասած ըլլալով, վիճակահանութիւ- նը տեղի պիտի ունենայ որոշեալ օրն, այնէ առաջիկայ կիրակի 5 Օգոստոսն Տ. աղգային Մանկապարտէզի Սը- րահին մէջ, Ս Եկեղեցւոյ ատաւոտեան ժամերգութիւնէն անմիջապէս յետոյ, ընդ հսկողութեամբ Աւսնորդարա- նի ներկայացուցչին ։

Փափաքողներն եւս ազատ են ներկայ գտնուելու

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՑ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

Ընկերութեանս Ա. տարեշրջանը լրանալու չմտ է, եւ միամտայ հաշուեկշիռն ու տեղեկագիրք պիտի պատ- րաստուի, ներկայուելու համար յառաջիկայ Ընդհ. Ժողո- վոյ տարեկան գումարման, որ տեղի պիտի ունենայ Ազգ. Մանկապարտէզի Սրահ, Օգոստոս 26 ին կիրակի օրը ։ Եւ որովհետեւ միամտայ հաշուեկշիռ մը պէտք է պարունակէ ամբողջ մէկ տարուան գործառնութիւնները, հարկ անհրաժեշտ է որ հաշիւները փակուին մինչեւ Օգոս- տոս 1. թուական հիմնարկութեան Լսարան. Ընթերցա- պուն ընկերութեան ։

Հետեւեալ Գործ. Ժողովս պարտք կ'զգայ պաշ- տօնապէս հրատարակութեան տալ ընկերութեանս հիւ- նական կանոնադրին 7րդ եւ ներքին կանոնադրին 14րդ յօդուածները ։

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ. Յօդ. 7. — Այն անգամ որ երեք ամիս շարունակ անվճար կը բողոքուի իւր բաժանո- ղութեան պարտքը, Գործ. Ժողովոյ կողմէն կ'ենթարկուի ներքին Կանոնադրի 14րդ յօդուածին ճիշտագործութեանը ։

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆ. Յօդ. 14. — Գործ. Ժողովոյ վեր- ջին պատշտական ազդարարութեան յետոյ զարձեալ իւր պարտքը չ'վճարող անգամ կը զրկուի Ընդհ. Ժողովոյ անդամակցութեան ։

Հիմնուելով Ընկերութեանս Ընդհ. Ժողովոյ բա- ցարձակ հաւանութեամբ վաւերացեալ հիմնական եւ ներքին կանոնադրիներուն վերոյիշեալ 2 յօդուածներուն ուղւոյն վրայ, սոյն վերջին պաշտօնական ազդարարու- թեամբ կը հրաւիրենք ուշադրութիւնը բոլոր այն Պատ- ընկերներուն որոնք իրենց պարտքը սարգ թերաւճար թողած են կամ բնաւ չ'են վճարած ։ Առ այս Գործադիր Ժողովն պայմանաժամ որոշած է մինչեւ յառաջիկայ Օգոստոս 12 ։ Մինչեւ այդ որոշեալ թուականը կը խնդրուի Պատ. անդամներէն որ հաճին ամբողջացնել իրենց վճարութեանը, զիմիով ՆՈՐ ՕՐԻ խմբագրատունը որ է Ընկերութեանս կեդրոնատեղին, Պազար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը. հակառակ պարագային, Գործ. Ժողովոյս կողմանէ անդամակցութեան զրկուած կը յայտարարուին անոնք, ըլլան նոյն իսկ Մայր Դի- ւանի կամ Գործ. Ժողովոյ անդամներ ։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՏԻԳՐԱՆ Ն. Թ. ՍԱԻԱԼԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Ս. Դարբինեան տպարանէն մաքուր տպագրութեամբ եւ հեղինակին վիճակը պատկերով զարդարուած՝ ի լոյս կ'ելնու մօտ է հարիւրէ աւելի էջերէ բաղկացեալ սոյն կենսագրական երկն որ իւր շահեկան պարունա- կութեամբ արժանի է ամեն կարգի ազգայնոց ընթերց- ման ։ Ինքնակենսագիրք, Զմիւռնիոյ հին ծանօթ գրա- կան զէմբերէն մին, իւր երուսաղէմ, Ազգ. քանդակա- իրար եւ Էօտէմիշ վարած ուսուցչական եւ այլ կա- րեւոր պաշտօններու բերմամբ՝ ազգային եւ օտարազգի եկեղեցական եւ աշխարհական նշանաւոր անձնաւորու- թեանց հետ ունեցած է գրաւոր եւ մտերմական յարա- բերութիւններ, զորս զիրցած է ճարտար եղանակաւ մը խառնել իւր կենսագրական յուշերուն, այնպէս որ աւ- բողջ գործն մէկ շունչով կարելի է կարգաւ անձան- ըրոյթ եւ լարուած հետաքրքրութեամբ ։

Որովհետեւ սակաւաթիւ օրինակներ միայն տպուած են սոյն կենսագրական երկէ, փափագողք կրնան այժ- մէն ընել իրենց յանձնարարութիւնն՝ զիմիով

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Ի Պազար Մուրուր Թիւ 27 Գին 5 ԴԱՀ. ՈՂ.Ձ

ԿԵՐՈՆԱԿԱՆ-ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԵԻ

Հաստատուել 1 յունվար 1897

Հիմնադիր-ՅԵՕՐԷԳ

Ս. ԲԻՒՐՍ

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապահ, ե Յուլիս 15 սկսեալ՝ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին լրացուցած եւ գէթ նախնական կրթութիւնն ստացած ։ Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, եւ անգ- լիերէն. նաեւ, առեւտրական աշխարհագրութիւն ու տօմարակալութիւն, գործնական մէթոտով ։ Ընդունելութեան պայմաններուն եւ ուրիշ մանրամասնութեանց տեղեկանալու համար զիմի կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐԻ խմբագրա- տունը, Պազար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասե- նեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բաց ի կիրա- կիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչեւ 6 ։

Le gérant, J. MUNIER.

ԿՈՒԶԷՔ ՈՒՆԵՆԱԿ ՈՍԿԻՒ

ԿՈՒԶԷՆ ԼԱՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ԺՍՄԱՑՈՅՑ ՄԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ԴՐՇ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷՔ

ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյց- ներու ամենազիւրաւատելի գներէն սկսելով մինչեւ ազամանդազարդ ։ Արժաթ ժամացոյցներ 50 զրուշէն սկսեալ նիքէլ արձանթուա ժամացոյցներ 22 զրուշէն սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շՇ- թաներ եւ զոհարեղէններ, ինչպէս նաեւ պատի եւ քօնաօրի բազմազան բանախմբեր ։ Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յա- տուկ, 10 Դրուշի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ընեն ։

Ուրեմն զիմեցէ՛ք ուղղակի ։

ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆԸ

ԱՏԱՆԱԲՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկոնը. կը բժշկէ բերնի եւ ախւայի ամեն տեսակ հիւանդութիւնները ։ Աղքատները չ'ըն կը դար- մանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9 ։

ԶՈՒԼԻՉ - ՄԵՔԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐՔ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԳԱՐԲԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Շարա Մուհամմէտ Ալի, Հապպանիի

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արոյրէ զանազան գործիներ ոսկերչութեան եւ ուրիշ նուրբ արհեստներու վերարեւելու, ծորակ, կշիւ, Յոսանորդները գօհացունող պայմաններով ։

ԱՒԱՆԴԱՏԱՐ (ԷՄԱՆԷԹՃԻ)

ԱՍՏԻԿ ԷՍՄԵՐԵԱՆ

ՇԱՐԷ ՄՕՂԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԼԻ, ԳԱՀԻՐԷ

Կ. Պօլսոյ մուհամմադանաի խանութի թով Թիւ 82

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլսոյ Պաղէ Դարու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը բնակող եւ երկար ժամանակէ ի վեր իւր փորձառութեամբ եւ ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախորդաց վստահութիւնը գրաւող ԷՄԱՆԷԹՃԻ Աբրահամ էֆ. Պաղթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է ։ Այսուհետեւ Կ. Պոլսէն Եզիպտոս եւ Եզիպտոսէն Կ. Պոլիս ղրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու ապահով պիտի յանձնուին սահմանեալ տե- ղերնին ։

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՋԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 3 ՕԳՈՍՏՈՍ 1900

Table with 6 columns of numbers: 6088, 7430, 1728, 1853, 1308, 664; 804, 941, 1880, 2021, 2391, 3247; 3471, 4601, 4835, 5138, 5433, 5787; 5491, 6471, 7205, 7408, 7326, 7628; 7779, 8071, 8677

Տպագրութիւն Ս. ԳԱՐԲԻՆԵԱՆ — Պազար Մուրուր